# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՍՈՒՐԲ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(17 սեպտեմբերի, 2013 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Աիեղ խորհրդին երկինք են եկեղեցին,
աթոռ փառաց է սեղան խորհրդին,
եւ Քրիստոս իջեալ դնի ի վերայ՝
որ միշտ բաշխի ի փրկութիւն ամենեցուն»:

**Ս. Յովհան Մանդակունի**

Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Սրբալույս մյուռոնով, առ Բարձրյալն Աստված գոհաբանությամբ կատարեցինք օծումը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպություն եկեղեցու, որը պիտի հավելի օրհնությունն ու երկնառաք շնորհները այս ավանդաշատ երկրում, Ռուսաստանում բնակություն հաստատած հայության եւ Քրիստոսասեր ռուս եղբայր ժողովրդի կյանքում:

Հոգու առանձնակի ուրախություն է, որ սրբազան այս արարողությանը մասնակցություն է բերում ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայրը՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքը, ում հայտնում ենք Մեր երախտագիտությունը այս խնդալի առիթով Մեզ աղոթակից եւ ուրախակից լինելու համար: Գոհունակ սրտով ողջունում ենք ներկայությունը Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ Տիար Սերժ Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեծարգո նախագահ Տիար Բակո Սահակյանի, Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության պետական հարգարժան այրերի եւ մաղթում, որպեսզի շեն ու պայծառ լինեն Հայաստանն ու Ռուսաստանը եւ շարունակաբար արդյունավորվեն մեր երկրների ու ժողովուրդների բարի գործակցությունն ու եղբայրական հարաբերությունները: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր Քույր եկեղեցիների եւ կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներին, ինչպես եւ աշխարհի տարբեր երկրներից ժամանած մեր Սուրբ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներին եւ աշխարհական հավատավոր զավակներին Ռուսաստանից եւ արտերկրից:

Սիրելիներ՛, հոգեւոր բերկրանքի օր է այսօր ամենքիս համար, քանզի Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում ռուսաստանաբնակ բարեպաշտ հայորդյաց ազնիվ, առատաձեռն նվիրատվություններով շքեղակառույց հառնել է նոր աղոթավայր՝ առաջնորդանիստ հոյակերտ համալիրով: Եկեղեցին կոչեցինք Պայծառակերպություն անունով, քանզի այն նոր պայծառություն պիտի բերի ռուսահայ համայնքին: Այստեղ

հավատացյալ Մեր զավակները լեռան վրա պայծառակերպված Տիրոջ նմանությամբ պիտի փոխակերպվեն ու պայծառակերպվեն եկեղեցու լույս խորանից հեղվող երկնային շնորհներով, լցվեն հոգևոր նորոգությամբ ու զորությամբ: Արդարև, ընդհանրական Եկեղեցու Հայրապետներից Սուրբ Հովհան Ոսկեբերանը Եսայիի մարգարեության մեկնության մեջ Եկեղեցին նմանեցնում է բարձր լեռան, որը դիմակայում է չարի ամեն հարձակման, իսկ մեր Եկեղեցու Ս. Հայրապետ Հովհան Մանդակունին Եկեղեցին կոչում է երկինք երկրի վրա, որտեղ մենք հաղորդակցվում ենք երկնայիններին, մարմնավոր իրողություններից բարձրանում դեպի հոգևորը, միավորվում ի Քրիստոս՝ կազմելով հավատացյալ հավաքականությունը, Քրիստոսի խորհրդական մարմինը: Տաճարը քարեղեն մանրակերտն է մեր այդ հոգևոր հավաքականության, որի մասին առաքյալն ասում է. «Օտար և պանդուխտ չեք, այլ սրբերին քաղաքակիցներ և Աստծո ընտանիք, կառուցված առաքյալների և մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոս Հիսուսն է» (Եփ. Բ. 19-20):

Աշխարհասփյուռ մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունի եկեղեցու միավորող ու պայծառակերպող սրբարար ներգործությունը: Հայ ժողովրդի պանդուխտ զավակները Մայր Հայրենիքից հեռու Մայր Եկեղեցու գրկում համախմբվեցին ու հոգևոր արժեքներով զորանալով, եղբայր ժողովուրդների ու պետությունների սատարումով ու օգնությամբ, ինչպես այստեղ՝ Ռուսաստանի Դաշնությունում, կազմակերպեցին ազգային-եկեղեցական իրենց կյանքը և հաստատուն պահեցին հավատքն ու ազգային միաբանության ոգին:

Սիրելի հավատավոր զավակներ Մեր, առաջնորդանիստ այս հոյակերտ եկեղեցին Մենք օծեցինք հավատով, որ այն նոր լիցք և վերելք է բերելու համայնքային ձեր կյանքում՝ հրավիրելով աղոթքի, աստվածպաշտության, հոգևոր նորոգության, ազնիվ ու արդար գործերի: Եկեղեցին նաև հրաշագեղ է պատկերաքանդակներով, որոնք որպես մեր դարավոր պատմության մաքառումների ու հաղթանակների էջեր՝ արձանագրված նվիրական աղոթավայրի սրբատաշ քարերին, պիտի հանապազ քաջալերեն ձեզ ազգային ոգու, եկեղեցանվիրումի ու հայրենասիրության մեջ: Այս պերճաշուք պատկերաքանդակները այլազգի մեր եղբայրներին պիտի ծանոթացնեն հայոց պատմության հիշարժան դրվագներին, վասն հավատո և վասն հայրենյաց պայքարներին, մեր ժողովրդի՝ երկրից երկինք ձգվող փառավոր գործերին, որոնց շարունակողներն այսօր դուք եք ձեր հավատավոր կյանքով ու ընթացքով:

Այսօր փառքով փայլում են մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր սերն ու հավատքը, ձեր հոգևոր կյանքի վերազարթոնքի ձգտումն ու տեսիլքը, որոնցով կերտվել է Ս. Պայծառակերպության եկեղեցին: Զորավոր պահեցեք ձեր հավատքը, եկեղեցասիրության և ազգասիրության ոգին. այս է ձեզ հայրական Մեր խորհուրդը և Հայրապետական պատգամը: Միշտ հաստատուն քայլերով բանուկ պահեք ճանապարհը դեպի այս սուրբ եկեղեցին, որտեղ բաշխվող Տիրոջ շնորհներն ու զորությունը ուժ և կորով պիտի տան ամենքիդ՝ ձեր սրտերում կրելու լուսեղեն պատգամները մեր Տեր Հիսուս Քրիստոսի, ապրելու աստվածահաճո ընթացքով, հաղթահարելու մեր ժամանակների

մարտահրավերները եւ մշտապես հավատարիմ մնալու հայրենական ժառանգությանն ու սրբազան մեր արժեքներին:

Եկեղեցու օծման հոգեհորոգ այս առիթով գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում եկեղեցու բարերարներին՝ իրենց մեծազնիվ ներդրումների, մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ որդիական սիրո եւ նախանձախնդրության համար: Մեր հավատավոր ժողովրդի անունից հանձին Մոսկվայի եւ համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի՝ երախտագիտություն ենք հայտնում Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւորականներին եւ բարեպաշտ զավակներին, որ Քրիստոսապատվեր եղբայրական սիրով սատարում են ռուսահայության հոգեւոր կյանքի զորացմանը: Մեր մասնավոր երախտագիտությունն ենք հայտնում Ռուսաստանի Դաշնության եւ Մոսկվայի քաղաքային իշխանություններին, որոնք բարյացակամ վերաբերմունքով հանդեպ հայ ժողովրդի զավակները, աջակից են Ռուսիո բարեկամ երկրում հայոց ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացին: Մեր գնահատանքն ենք բերում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանին եւ ողջ հոգեւորականաց դասին՝ նվիրյալ եւ ժրաջան ծառայության համար: Առաջնորդ Սրբազանը այս գեղեցկակերտ եկեղեցու կառուցման գործում մեծ ջանք ու եռանդ է ներդրել, որպեսզի Ռուսիո հայության հոգեւոր եւ ազգային կյանքը բարգավաճի եւ առատանա նոր արդյունքներով: Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի նախանձախնդիր ծառայության բարձր գնահատանքով այսօր Մենք Սրբազանին շնորհում ենք Արքության պատիվ եւ նրա կուրծքը զարդարում ենք հայոց այրուբենը պատկերող եպիսկոպոսական պանակեով՝ մաղթելով, որ Սրբազանը շարունակի մեսրոպաշունչ մեր հայրերի նմանությամբ նորանոր հաջողություններով արգասավորել իր հոգեւոր առաքելությունը: Առանձնակի գնահատանք ենք բերում նաեւ թեմական եւ եկեղեցական համայնքային վարչությանց բարեջան անդամներին, եկեղեցու կերտմանը կարեւոր մասնակցություն բերած բոլոր անձանց, շինարարներին, բանվորներին, քանդակագործ վարպետներին, գլխավոր ճարտարապետ փիար Արտակ Ղուլյանին, ում նախագծերով Հայաստանում եւս հառնել են գեղեցկակերտ եկեղեցիներ:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, այս տոնական օրը նորաօծ եկեղեցու լուսավոր կամարների ներքո աղոթենք միասնաբար, որ Բարձրյալն Աստծո օրհնությամբ շենանան եւ զորանան Հայրենի մեր երկիրը եւ Ռուսաստանի Դաշնությունը, մեր Տիրոջ հոգեւոր լույսով պայծառանան մեր Եկեղեցիները, եւ հավետ ամուր լինի հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որը միշտ փայլել է պանծալի գործերով: Հայցենք, որ աշխարհը եւ ողջ մարդկությունը եւ աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովուրդը ապրի ապահով, խաղաղ ու երջանիկ Տիրոջ Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո: Եւ թող Աստված միշտ պայծառ պահի Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմը եւ նորակերտ այս եկեղեցին՝ ի վայելումն եւ ի մխիթարություն հավատացյալ Մեր զավակների:

Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ. ամէն (հմմտ. Հռ. ԺԵ. 13):